

ոմն կարմիր, ոմն կանաչ եւ այլն խէտումէս :
 Այլ եւ չորս պատն ամէն տախտակք էին ան-
 ցուցած մէրմէրէ, որ իրբեւ զհայելի փայլէին
 եւ զմարդոյ կերպն ցուցանէին : Եւ բուն տա- 45
 ճարն սօմախի մէրմէն էր : Եւ ի մէջ տաճա-
 րին ի վերայ սուրբ գերեզմանին շինած էր
 ի վերայ չորս մեծամեծ հրեշտակաց զմպէ-
 թայարկ կամար եւ մէջն խորան . եւ այն էր
 աւագ խորանն : Եւ կախեալ կային բազում 50
 կանթեղք մեծամեծք յոսկոյ եւ արծաթի ի
 վերայ սուրբ Գերեզմանին, որ ալիւ եւ զիշեր
 ի վառ կային : Այլ եւ եկեղեցոյ ներքեւն մա-
 զարայ էր, ուր բազում նշխարք եւ խորանք
 սրբոց կային . եւ պատերն ամէն սօմախի գե- 55
 ղեցիկ մէրմէրէ պատած էր :

Եւ ելեալ անտի գնացաք զՈղորմութեան
 դուռն համբուրեցաք : Եւ ասին թէ Ողորմու-
 թեան դուռն յիսուն տարին ապա բացվէր
 ըստ յորելինի ազատութեան . եւ տեսան որ 60
 հազարէն մէկն չի հասնիլ այն օրն . խնդրե-
 ցին կարճել . իսկ Փափն քսանուհինգ ամ ա-
 րար : Եւ յայնմ ամի, յորում բացվի, յոք-
 նախումբ աշխարհաժողով լինի . զի ամէն
 երկրէ գան : Եւ տարի մի կամեցաւ Փափն 65
 իմանալ զթիւ ուխտաւորացն . եւ եզ մարդիկ
 ի դրունս քաղաքին եւ գտաւ ճՌ ըխտաւոր :
 Փա՛ռք Աստուծոյ :

Եւ յառաջ գնացեալ չուրջ գեկեղեցեալ